ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

19 փետրվարի 2024թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ՄԽ-Ո-08
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Ջուլհակյանի, Սոնա Խալաֆյանի, Նինա Փիրումյանի, Արթուր Հովսեփյանի և Արմեն Ասատրյանի կազմով, 2024թ. փետրվարի 19-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

Ուսումնասիրելով հավակնորդներ Նվարդ Վարդանյանի և Սարգիս Միրզոյանի 05.02.2024թ. ներկայացրած հայտերը՝ Խորհուրդը

Պ Ա Ր Զ Ե Ց

Սարգիս Միրզոյանի ներկայացրած փաստաթղթերը ամբողջական չեն և չեն համապատասխանում Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, ուստի Խորհուրդը որոշեց Սարգիս Միրզոյանի հայտի ընդունումը մերժել:

Նվարդ Վարդանյանի փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժետ փաստաթղթերի ցանկին, ուստի Խորհուրդը որոշեց Նվարդ Վարդանյանի հայտը հաստատել:

Հաշվի առնելով, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների երկու թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթին մասնակցելու հավակնություն է ներկայացրել երկու հավակնորդ և այն, որ

հավակնորդ Ս.Միրզոյանի հայտի ընդունումը մերժվել է, հետևաբար Ազգային ժողովի նախագահի կողմից 16.01.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթի հավակնորդների թիվը պակաս է թափուր տեղերի քանակից:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ազգային ժողովի նախագահի կողմից 16.01.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթը համարել չկայացած:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ